

ԱՌԱՆՅ ՆԱԽԱԳԱՅԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԱԹՈՒ ԶԿԱՅ

Յարաւային սահմանագիծի լարուածութիւնը մեղմելու եւ աւելի ընդարձակ պատերազմի բռնկումը կանխելու նպատակով, Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Սթեֆան Սեծուրնէ երկէ ժողովներ գումարեց լիբանանցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Ան հորինող-



րանի նախագահ Նեպիի Պըրրիին յանձնեց մագլցումը կանխելու եւ պատերազմը դադարեցնելու առաջարկները, իսկ Պըրրի խոստացաւ զանոնք ուսումնասիրել ետք յայտարարել: Լիբանանի կեցուածքը: Խորհրդարանի նախագահը շնորհակալութիւն յայտնեց ֆրանսական ներգրաւածութեան համար, շեշտելով, որ Լիբանան կառայած կը մնայ 1701 բանաձեւի գործադրութեան: Ան ֆրանսացի հիւրին ներկայացուց իւրայեւնական շարունակական ունեցողութիւնները, արգիլուած գէներու գործածութիւնը եւ Լիբանանի պատճառած տնտեսական մեծ վնասները: Պըրրի շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի շարունակական ջանքերուն համար, որոնք կը միտին կանխել պատերազմի ընդարձակումը եւ անյապաղ վերջ տալ թշնամական գործողութիւններուն: Ան խօսեցաւ սուրիացի տեղահանուածներու թղթածրարին մասին, երուպական գլխաւոր երկիրներէն պահանջելով վերատեսութեան ենթարկել Սուրիոյ հետ յարաբերութիւնները եւ օժանդակել գաղթականներու տունդարձին:

Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին հետ իր տեսակցութեան ընթացքին վարչապետի պաշտօնակա-



տար Նաժիպ Միքաթի յայտարարեց, թէ ֆրանսական նախաձեռնութիւնը կը կազմէ ՄԱԿ-ի 1701 բանաձեւը գործադրելու գործնական շրջագիծ մը: Սեծուրնէ երկէ այցելեց Նաեւ Լիբանանի հարաւային գօտի, ուր հետեւեցաւ գետնի վրայ տիրող իրավիճակին եւ Նաքուրայէն յայտարարեց, թէ իր հետ լիբանան բերած է հանդարտութիւնը վերահաստատելու եւ պատերազմին վերջ տալու ֆրանսական առաջարկներ: Անոր համաձայն, եթէ Կազայի մէջ պատերազմ չըլլար, ապա Լիբանանի մէջ տեղի ունեցածը ինքնին պիտի համարուէր պատերազմ: Խօսելով բանակցութիւններուն Լիբանանի մասնակցութեան նիւթին մասին, Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը շեշտեց, թէ Յանրապետութեան նախագահի բացակայութեամբ Լիբանան պիտի չիրաւարուի բանակցային նիստերու: «Կը մերժենք վատագոյն տարբերակը՝ պատերազմը», ըսաւ նախարարը:

ՀԱՐԱՄԱՅԻՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐ

Շարունակելով Յրգալայի եւ քաղաքացիական թիրախներ միաժամանակ հարուածելու սովորութիւնը, Իսրայէլ երկէ ծանրորէն հարուածեց հարաւային Սրըպպին



գիւղը, վիրաւորելով 14 անձեր՝ ներառեալ քաղաքացիներ: Յրգալայ յայտարարութեամբ մը Նշեց, թէ որպէս զօրակցութիւն պաղեստինցիներուն եւ հակադարձութիւն լիբանանեան գիւղերու ռմբակոծումին, դիպուկ հրթիռներով եւ անօդաչու սարքերով կրակ բացած է իսրայէլեան Մանարա բնակավայրի գիւնտրական դիրքին եւ Կոլանի ջնկատի հաւաքավայրին վրայ, պատճառելով լուրջ վնասներ: Ըստ իսրայէլեան լրատուամիջոցներուն, Յրգալայի հրթիռներուն պատճառով վիրաւորուեցաւ իսրայէլցի գիւնտր մը:

ԳՈՐԾԱԴՐԵԼ 1701 ԲԱՆԱԶԵԸ

Լիբանանեան ուժեր կուսակցութեան Մաարապի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ ընդդիմադիր ուժերու «Ազգային Յանդիպումը», որուն եզրափակիչ յայտարարութեան մէջ դատապարտուեցաւ նոր նախագահի ընտրութեան ձգձգումը եւ պահանջուեցաւ անյապաղ գործադրել ՄԱԿ-ի 1701 բանաձեւը:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժաաժաա դիմադրութեան ճակատը ամբաստանեց դրական որեւէ զարգացում կանխելու Լիբանանի մէջ:



Կարծիք յայտնելով, որ Յրգալայ կարողութիւն չունի պաշտպանել Լիբանանի սահմանը, ժաաժաա կոչ ուղղեց սահմանագիծէն հեռացնել Յրգալայ, որպէսզի Լիբանանեան բանակը տեղակայուի երկրի ամբողջ տարածքին: «Գլխաւոր խնդիրը Լիբանանի մէջ Յրգալայի պետութեան ներկայութիւնն է, որ կը թալանէ երկրին գիւնտրական որոշումները եւ կ'արտօսէ Պեքաայի մէջ սահմանային ապօրինի անցակէտերուն գործունէութիւնը»:

ՆԵՒՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԱՍՈՐ Է

Լիբանանի կեդրոնական դրամատան կառավարիչի պաշտօնակատար Ուասիմ Մանսուրի հաւաստիացուց,



թէ ամերիկեան տոլարի շուկայի գինը ամիսներ ի վեր կը զգալի ապահովական ուժերուն ջանքերով, ոչ թէ Յրգալայի կամ այլ ուժերու միջամտութեամբ: «Զեմ արտօներ, որ կեդրոնական դրամատան հաստատութեան մէջ ըլլան քաղաքական կամ փտած երեւոյթներ», ըսաւ Մանսուրի, շեշտելով, թէ դրամատան բոլոր պաշտօնեաները կ'աշխատին իսկական կամքով եւ ամբողջական յանձնառութեամբ:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Համաս շարժումի պատասխանատուներ Ռոյթըրը լրատու գործակալութեան յայտնեցին, թէ պատուիրակութիւն մը այսօր պիտի ուղղուի Գահիրէ՝ մասնակցելու համար գիւնտրարի բանակցութիւններուն: Անոնց համաձայն,



շարժումին ներկայացուցիչները իսրայէլեան կողմին հետ պիտի ընկերակցեն գիւնտրարի միջնորդական առաջարկները եւ անոնց գծով Իսրայէլի պատասխանները: Նշեալ խորհրդակցութիւններու նախօրէին, Իսրայէլ նամակ յղեց Գահիրէի իշխանութիւններուն, յայտնելով թէ պատրաստ է ընդունիլ Համասի բոլոր նախապայմանները, բացի գիւնտրարէն ետք պատերազմին վերջ տալու պահանջէն: Այս առումով, իսրայէլեան իշխանութիւնները պատրաստակամութիւն յայտնած են քաշուի մարդասիրական օգնութիւններու փոխադրութեան յատկացումը անցքերէն, արտօսել Կազայի հիւսիսային հատուած պաղեստինցիներուն վերադարձը եւ բանտերէն ազատ արձակել բազմաթիւ պաղեստինցիներ: Իսրայէլցի պատասխանատուներ պատրաստակամութիւն յայտնած են Նաեւ Համասի հետ ընկերակցել երկարատեւ հանդարտութեան հնարաւորութիւնը, պայմանաւ որ նախ ազատ արձակուին իսրայէլցի գերիները: Այս առաջին անգամն է, որ Իսրայէլ

ՊԱՅՏԸՆ. «ԹՐԱՄՓ 6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅ Է»

Միացեալ Նահանգներու 81 տարեկան նախագահ Ծօ Պայտըն հակադարձեց իր տարիքին գծով նախկին նախագահ՝ 77-ամեայ Տոնըլտ Թրամփի ամբաստանութիւններուն եւ ըսաւ. «Ծիշո՛ւ Է՛ տարիքը ինդիք Է: Ես չափափաս մարդ եմ որ կը մրցիմ 6 տարեկան թեկնածուի դէմ»: Նշեց, որ այս աշխարհային կայանալիչ նախագահական ընտրութիւնները վերստին դէմ յանդիման պիտի բերեն Պայտընն ու Թրամփը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՆԱՅՈՒՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ


Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Անթոնի Պլինքընի հետ: Վերջինս նման գրոյց մը ունեցաւ Նաեւ Ատրպէյճանի



նախագահին հետ: Պլինքըն Ուաշինկթընի աշակցութիւնը յայտնած է կայուն եւ արժանավայել ու երկարատեւ խաղաղութեան համաձայնութեան յանգելու հայ-ատրպէյճանական ջանքերուն: Պլինքընի համաձայն, Միացեալ Նահանգներ կ'ողջունէ Այմա-Աթայի հռչակագրին գործածութիւնը՝ որպէս սահմանազատումի հիմք օգտագործելու որոշումը: Ան նաեւ իր երկրին մնայուն աշակցութիւնը յայտնեց վարչապետ Փաշինեանի իշխանութեան՝ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը պահպանելու, երկրի բարգաւաճումին, ժողովրդավարութեան եւ անկախ ապագային ուղղուած ջանքերուն:

ՄԻՂՈՅԵԱՆ ԶԱԹԱՐԻ ՄԵՋ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան Տոհայի մէջ տեսակցեցաւ Զաթարի վարչապետ, արտաքին գործերու նախարար շէյխ Մոհամմատ



պըն Ակըրտ Էլ Ռահման Ալ Սանիի հետ: Զրուցակիցները գոհունակութեամբ խօսեցան զանազան ոլորտներու մէջ հայ-քաթարեան յարաբերութիւններու զարգացումին մասին, պատրաստակամութիւն յայտնելով ընդարձակել երկկողմանի օրակարգը:

Նշում կը կատարէ պատերազմի դադարեցումին, որպէս գերիներու ազատ արձակումի համաձայնութեան մասին:

ՀԱԿԱՍԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ

Համասի գիւնտր թէ «Զասսամ» երկէ հրապարակեց իսրայէլցի շարք մը գերիներ ցոյց տուող տեսագրութիւն մը, որուն մէջ գերիները իրենց կառավարութենէն կը պահանջեն անյապաղ կնքել գիւնտրարի համաձայնութիւն: Գերիները ահազանգեցին Նաեւ, թէ քանի մը տասնեակ իսրայէլցիներ մահացած են Կազայի իրենց արգելափակչերու ռմբակոծումին պատճառով:



Իսրայէլցի գերիներուն հարազատները երկէ վերստին բողոքի ցոյց մը կազմակերպեցին Թէլ Աւիվ մէջ՝ կառավարութենէն պահանջելով ազատել իրենց գաւակները: «Կառավարութիւնը պէտք է ընտրէ կամ գերիներու արձակումի գործարքը կամ Ռաֆահի գործողութիւնը», ըսին ցուցարարները, գործնականօրէն ահազանգելով, որ Ռաֆահի դէմ յարձակելու պարագային անկարելի պիտի ըլլայ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊՈՒՄՆՈՒԹԵԱՆ 109-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄՈՆԹԵՎԻՏԷՈՅԻ ՄԷՋ

Ապրիլ 24-ին Մոնթեվիդեոյի «Արմենիա» հրապարակին վրայ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 109-րդ տարեկանի նույնպես միջոցառում: Ուրուկուայի Բազմամիութենական կազմակերպության նախաձեռնությամբ



կայացած միջոցառման շրջանակներում մեջ ելոյթներով հանդես եկան ՀՀ դեսպանության գործերու ժամանակավոր հաւատարմատար Մարիամ Գեորգեանը եւ Ֆրանսայի դեսպան ժան-Փոլ Սեյթրեն:

Շնորհակալութիւն յայտնելով Ուրուկուայի կառավարութեան ու ժողովուրդին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին մեջ առաջամարտիկ ըլլալու եւ ցեղասպանութենէն մազապուրծ եղած հայերը ընդունելու համար, Մ. Գեորգեան ընդգծեց, որ Ուրուկուայը բոլոր դժուարին պահերուն մշտապէս եղած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի կողքին:

Ֆրանսայի դեսպանը իր ելոյթին մէջ նշեց, որ Ֆրանսան Հայոց ցեղասպանութեան մասին բարձրաձայնած առաջին երկիրներէն է եւ օրէնքով ճանաչած է զայն: Բարձր գնահատելով հայ-ֆրանսական դարաւոր բարեկամութիւնը՝ դեսպանը վստահեցուց, որ այն պիտի շարունակէ ամրապնդուիլ եւ Ֆրանսան այսուհետ եւս անվերապահօրէն պիտի աջակցի Հայաստանին: Ֆրանսայի դեսպանը նաեւ մեքերեց Հայաստանի մասին աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուրի խօսքերէն: Դեսպանը իր ելոյթին մէջ նաեւ անդրադարձաւ Միսակ եւ Մելինէ Մանուշեաններուն եւ անոնց կեանքի կարեւոր դրոշմներուն:



Բազմամիութենական կազմակերպութեան անունով ելոյթ ունեցաւ ՍԴՀԿ Ուրուկուայի Վարիչ մարմինի փոխատենապետուհի ընկերուհի՝ Լաուրա Ալանեսանը: Վերջինս իր խօսքին մէջ նշեց, որ ցեղասպան քաղաքականութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ կը շարունակուի մինչ այսօր, որուն վառ ապացոյցն է արցախահայութեան դէմ Ատրպէյճանի սանձազերծած ցեղային զտումն ու բռնի տեղահանումը, որ միջազգային հանրութիւնը չկանխեց: Ընկերուհի Ալանեսան հայութեան կը ըրաւ ինքնա-

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒՆՈՎ ԹՈՒՐԵՊՈՅ ԴԻՏԻ ՓՈԽԱՆՅՈՒ ԱՆԻԻ ԿԱՄՈՒՐՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԻՐ ՄՕՏԵՃՈՒՄՆԵՐԸ. ՄԱՐԳԱՐԿ-ԱԼԻՋԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԸ ՊԱՏՐԱՍ Ե ԸՆԴԱԳՈՐԾՄԱՆ

Հայաստանը շուտով թուրքոյ պիտի փոխանցէ Անիի կամուրջի վերականգնման շուրջ իր մօտեցումները: Այս մասին յայտնած է Արտաքին գործերու նախարարութեան մամուլի ծառայութիւնը:



Թուրքիան Հայաստանին փոխանցած է Անիի կամուրջի վերանորոգման վերաբերեալ արձանագրութիւն, որ ներկայիս լրամշակման փուլի մէջ է եւ յառաջիկային պիտի փոխանցուի թրքական կողմին: Ինչ կը վերաբերի Մարգարա-Ալիջան սահմանային անցակետին, ապա գերատեսչութիւնը կը վստահեցնէ, որ անցակետի վերանորոգման աշխատանքները աւարտած են, այն պատրաստ է շահագործման:

դատաբար մօտենալու հարցին՝ հասկնալու համար, թէ որո՞նք են մեր սխալներն ու բացթողումները այս հարցին մէջ: Նաեւ պետք է շեշտել Սփիւռքի դերակատարումը այս հարցին մէջ. արդէ՞ք տեղին է եւ օրինական, որ արտասահմանէն փորձեն սասանել Հայոց պետականութեան կայունութիւնը եւ քաղաքական շահեր հետապնդել, երբ պետութեան ապագան վտանգի մէջ է: Մեր մօտեցումը այն է, որ աւելի քան երբեք Սփիւռքը պետք է կանգնի Հայոց պետութեան կողքին, որուն գլխաւոր պահանջը պիտի



ըլլայ պետութեան հզօրացումն ու ժողովրդավարական հիմնարկները յարգելը:

Միջոցառման շրջանակներում մեջ Մոնթեվիդեոյի քաղաքապետարանին որոշմամբ բացուեցաւ յուշատախտակ՝ ի պատիւ Անթոնի Ռուբենեանի, որ հանդիսացած է «Հայաստան» հրապարակի բացման հիմնական նախաձեռնողը եւ ռատիօ «Արմենիա»-ի հիմնադիր տնօրէնը շուրջ 58 տարի:



Միջոցառման ներկայ էին Ուրուկուայի արտաքին յարաբերութիւններու նախարարի տեղակալ Նիքոլաս Ալպերթոնին, զբօսաշրջութեան նախարար Էտուարտո Սանկինտթօն, Մոնթեվիդեոյի քաղաքապետ Մատրիսիօ Սուլինսօ, առողջապահութեան նախարարի տեղակալ Խոսէ Լուիս Սաշեանը, շարք մը խորհրդարանականներ եւ քաղաքական-հասարակական գործիչներ, օտարերկրեայ դեսպաններ, դպրոցականներ եւ համայնքի ներկայացուցիչներ:



Հանդիսութեան աւարտին առաջնորդ սրբազան՝ Յակոբ արքեպիսկոպոս Գլընճեանի գլխաւորութեամբ հոգեւոր դասի ներկայացուցիչները արժօթեցին նահատակներու յիշատակին համար:

ՃԱՆԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ԳԱՏԻՐ ԱԳՐՆԻ ԵՒ ԿԱՐՈ ՓԱՅՆԱՆԻ

Կազմակերպութեամբ ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ մարմինին, Կիրակի, 21 Ապրիլ 2024-ի երեկոյեան, շքեղ ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ ՀԿԲԱ-ի կեդրոնին մէջ, ի պատիւ RED ֆիւնի բեմադրիչ եւ արտադրիչ, ինչպէս նաեւ գիրքերու հեղինակ Գատիր Ագրնի եւ Թուրքիոյ խորհրդարանի հայ նախկին երեսփոխան Կարօ Փայլանի:



Ողջերթի սոյն նախաձեռնութեան ներկայ էին ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան, ինչպէս նաեւ կուսակցական մասնաճիւղերու, ՀՄՄ-ի, Նոր Սերունդ մշակութային միութեան, Հայ ամերիկեան խորհուրդի, ՀԿԲԱ-ի եւ այլ կառույցներու ներկայացուցիչներ:

Կազմակերպիչ յանձնախումբին անունով բարի գալուստ մաղթեց հանդիսավար Հերի Իւնել: Ապա ելոյթ ունեցաւ Հայ ամերիկեան խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատուրեան՝ ներկայացնելով «Մասիս» հրատարակչական աշխատանքները՝ Հնչակեան կուսակցութեան արխիւները մեկտեղելու նպատակով:



Այս առթիւ ողջոյնի ջերմ խօսքերով ելոյթներ ունեցան շրջանիս Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան եւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան: Անոնք դրուատել ենք զոյգ հիւրերուն՝ Գատիր Ագրնի եւ Կարօ Փայլանի օգտաշատ ներդրումներն ու հայախառն ծառայութիւնները, նորանոր յաջողութիւններ մաղթեցին իրենց հետագայ ծրագրերուն:

Շնորհակալական ելոյթով հանդես եկաւ Գատիր Ագրնի եւ զովեստով արտայայտուեցաւ հայաշատ վայրերու մէջ իր անձին հանդէպ ցուցաբերուած ջերմ ու յարգալի ընդունելութեանց համար:

Կարօ Փայլան իր ելոյթին մէջ նշեց, որ հաւատացող մըն է մեր գաղափարախօսութեան: Իսկ անդրադառնալով ժամանակակից իրավիճակին, ըսաւ. «Պատմութենէն հարկ է դասեր առնել եւ հարցերը այս ձեով պետք չէ շարունակել: Ընտրեալ փոխուեցաւ երկրաշարժին առթիւ...: Ազգայնականներն ալ փոխուեցան...: Մենք պետք է կամուրջներ շինենք...: Դժուար է նախապաշարումները փոխել: Եկե՛ք, միասնաբար սիրով աշխատինք», յարեց Կ. Փայլան, վերապահ լաւատեսութիւն մը արտայայտելով իր եզրափակիչ խօսքին մէջ:

Աւարտին, ներկաները իրենց հետ տարին Գատիր Ագրնի հրատարակած պատմա-վաերագրական հատորներէն:

ՔԱՂԱՔԱՅԻ ՕՐՈՒՄՆ ԸՆՆՉՈՒԹԵԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՁԵՐՈՒՄՆ ԵՒ ԵՐԵՒՆԻ ՄԷՋ ԿԱՅՈՒՄՆ ԵՆ ՇԱՐՔ ՄԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քաղաքացիի օրուան առնչութեամբ Հայաստանի Հանրապետութեան մարզերուն եւ Երեւան քաղաքի վարչական շրջաններուն մէջ կայացած են տարաբնոյթ մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ, քննարկում-բանախօսութիւններ:

Հայաստանի մարզերու 73 համայնքներու եւ բնակավայրերու մէջ, ինչպէս նաեւ Երեւանի 12 վարչական շրջաններու մէջ տեղի ունեցած է «Հայրենիքը պետութիւնն է: Կը սիրես՞ հայրենիքը՝ ուժեղացո՛ւր պետութիւնը» խորագրով բանախօսութիւններու շարք:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Կարեն Գիլոյեանը Զարեհեանի Գառզուի անուան արուեստի դպրոցին մէջ, իսկ Ալֆրետ Քոչարեանը՝ Վերին Արտաշատի մշակութային տան մէջ հանդիպած են մարզի եւ համայնքի պատանիներու եւ երիտասարդներու հետ: Նախարարի տեղակալները երիտասարդներուն ներկայացուցած են պետութեան, հայրենիքի, քաղաքացիի իրենց պատկերացումներն ու տարիներու փորձառութիւնը:

Բանախօսութեան եւ անոր յաջորդող հարցուպատասխանի միջոցով ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալները խօսած են քաղաքացի-պետութիւն փոխարարութիւններու, աշխոյժ քաղաքացիական կեցուածքի մասին: Այս ձեւաչափով կազմակերպուած հանդիպումներուն

որպէս բանախօսներ հանդես եկած են մշակոյթի, կրթութեան, գիտութեան, մարմամարզի բնագաւառներու, քա-



ղաքացիական հասարակութեան, պետական կառավարման համակարգի տարբեր ներկայացուցիչներ: Արժեքաւակարգի մասին իրենց մօտեցումներով ու պատկերացումներով անոնք կիսուած են քննարկումներու մասնակիցներուն հետ՝ լսելով նաեւ երիտասարդներուն տեսակետը:

«Արարատ» օրաթերթը կը ներկայացնէ «Մետիամար»-ի «Ծանօթ-անծանօթ քաղաքներ» շարքը: Յաճախ միմեանց կ'ըսեն, որ «մենք մեր երկիրը չենք ճանչնար», հիմնականին մէջ սկստի ունենալով գեղատեսիլ վայրերը, բնական եւ ճարտարապետական յուշարձանները: Սակայն կրնանք պնդել, որ քիչ բան գիտնք նաեւ այն քաղաքներուն մասին, որոնք շատ մօտ են Երեւանին: Ուստի այս շարքով պիտի փորձենք որոշ չափով փակել այդ բացը եւ ներկայացնել 10 քաղաքներ, որոնք զբօսաշրջական չեն համարուիր (բացառութեամբ Էջմիածնի), սակայն ունին իրենց հմայքը:

ԾԱՆՕԹ-ԱՆԾԱՆՕԹ ՔԱՂԱՔՆԵՐ՝ ՅՐԱԶԴԱՆ

Լեռնաշղթաներու գիրկը կանգնած բարձրադաս 2-ն-քերու եւ գործարաններու, փարթամ եղևնիներու եւ գունաւոր խնձորենիներու քաղաք՝ այսպէս կարելի է բնութագրել Յրազղանը քանի մը բառով:

Յրազղանը (Նախապէս՝ Ախտա գիւղը) կը գտնուի Երեւանէն 40 քմ հեռավորութեան վրայ: Ախտայի առաջին յատկագիծը մշակուած է Ալեքսանդր Թամանեանի կողմէ 1927-28 թուականներուն: Արդիւնաբերութեան զարգաց-



ման եւ բնակչութեան աճի հետեւանքով 1959-ին Ներքին Ախտան քաղաքի կարգավիճակ ստացաւ եւ վերանուանուեցաւ Յրազղան՝ համանուն գետի անունով, որու ափին ալ կը գտնուի: Աւելի ուշ՝ Նոր յատակագիծին համաձայն, քաղաքին մէջ ընդգրկուեցան Մաքրաւան, Աթաբեկեան (այժմ՝ Վանատուր), Ջրառատ եւ Կաքաւածոր գիւղերը եւ շրջակայ տարածքները, կառուցուեցան Կեդրոն եւ Միքոշրջան թաղամասերը: Այսօր Յրազղանի ձգումառնութիւնը կը կազմէ մօտ 20 քմ:

Քաղաքը երեք զանգուածներէ կազմուած է՝ հարաւային, կեդրոնական, հիւսիսային: Նախկին Ախտայի ամբողջ տարածքը այժմ քաղաքի հարաւային թաղամասը կը հանդիսանայ:

Յրազղանը երկրին արդիւնաբերական եւ ուժանիւթի գլխաւոր կեդրոններէ է: Այստեղ կը գտնուին բազմաթիւ գործարանները: Յրազղանի մէջ նաեւ կը զբաղին գորգագործութեամբ, անասնապահութեամբ եւ կաթնամթերքի արտադրութեամբ:

1995 թուականէն Յրազղանը կը հանդիսանայ Կոտայքի մարզային կեդրոնը:

«Խտացուած Յայաստանը»

Քաղաքի հին բնակիչները այստեղ եկած են Սասունէն, Մուշէն, Կարսէն: Խորհրդային շրջանին, արդիւնաբերութեան զարգացման տարիներուն, աշխատելու նպատակով Յրազղանի մէջ բնակութիւն հաստատեցին մարդիկ Յայաստանի շատ քաղաքներէ եւ մերձակայ գիւղերէ, ինչպէս նաեւ՝ Ղարաբաղէն, Ջաւախքէն, Պաքուէն, Կիրովապատէն:



Յետաքրքրականը այն է, որ ամէն մէկը իր հետ հարազատ բնակավայրի աւանդութիւնները բերած էր, անով իսկ ստեղծելով փոքրիկ Յայաստանի պատկեր:

Յրազղանի մէջ կը սիրուի տօներ նշել, որոնցմէ պէտք է առանձնացնել Ձիանկիւլումի (Համբարձման) եւ Վարդավառի տօները: Վարդավառի օրը ջրուելէ բացի հրազղանցիները անպայման սեղան կը բանան, գառ կը մորթեն, մատաղ կ'ընեն:

«Տարօրինակութեան» հմայքը

Յրազղանի հետ ծանօթութիւնը սկսանք Կեդրոն թաղամասէն, որ կառուցուած է անցեալ դարու 70-80 թուականներուն: Տեղացիները կը պատմեն, որ մինչեւ կառուցապատումը այս տարածքին մէջ թուրքերու դաշտեր եւ ճահիճներ եղած են: Բնակելի շէնքերէն բացի, Կեդրոնին մէջ կը գտնուին տարբեր հիմնարկութիւններ, խանութներ, սրճարաններ: Այգիին մէջ կառուցելներ եւ շատրուաններ կան:

Այս ամէնը անսովոր է տեսնել սարերու մէջ «տեղաւորած», սակայն Նոյնինքն այդ «հակադրութեան» շնորհիւ իւրայատուկ մթնոլորտ կը ստեղծուի:

Կեդրոն թաղամասէն ոտքով կը շարժուի դեպի «հին» Յրազղան. ամբողջ ճանապարհի ընթացքին զգացողութիւն կ'առաջանայ, որ հրաշքով յայտնուած ենք լքուած 1980-ականներուն:

Ախտան եւ մշակութային վայրերը

Անցնելով «Ծովհնար» ջրամբարը, կը հասնինք Նախկին Ախտայի Աղբիւրակ թաղամաս: Այստեղ եղևնիներու մեծ այգի կայ, երբեմնի գործող կառուցելներով եւ բազմաթիւ նստարաններով:

Այգիին երկայնքով քանի մը յուշարձան տեղադրուած է, որոնց շարքին է Յայրենական մեծ պատերազմի զոհուածներուն Նուիրուած յուշասիւնակոթողը:

Այգիի վերջաւորութեան կը գտուի խճանկարային հրապարակը՝ արեւային ժամացոյցով եւ համաստեղութիւններու նշաններով:

Յին Յրազղանի տարածք մտնելուն պէս տեսարանը կը փոխուի. կը յայտնուին մէկարկակի տուներ՝ խնձորի այգիներով: Եթէ շարունակէք ընթացքը, կը հասնինք մինչեւ Յրազղանի պետական թատրոն: Այն հիմնադրուած է 1953 թուականին, տարիներու ընթացքին փոխելով տարբեր կարգավիճակներ՝ ինքնագործէն մինչեւ քաղաքային դրամատիկական:




Թատրոնի առանձնայատկութիւնը փորձարարական բեմադրութիւններն են: Թատրոնը մասնակցած է բազում փառատօներու եւ մրցանակներու արժանացած է:

Յաւուր, սուղ ֆինանսական իրավիճակի պատճառով շատ ներկայացումներ «կորած-զացած են», չնայած անոր, մարդիկ կը շարունակեն թատրոն յաճախել: Թատրոնը գեղեցիկ եւ հետաքրքրական դահլիճ ունի, որ չէ ձեւափոխուած ստեղծման օրուէն, իսկ շէնքին մէջ տեղի ունեցած բոլոր վերանորոգման աշխատանքները թատրոնի աշխատակազմը իրականացուցած է սեփական ուժերով:

Նոյն շրջակայքին մէջ կը գտնուի նաեւ Յայաստանի Ազգային պատկերասրահի Յրազղանի մասնաճիւղը, որ արդէն 50 տարուան պատմութիւն ունի: Պատկերասրահի բոլոր մասնաճիւղերէն Յրազղանի մասնաճիւղը ամենահինն է:



Տարիներ առաջ այստեղ շատ արժէքաւոր հաւաքածու ներկայացուած էր, որուն մէջ ընդգրկուած էին Այվազովսքի, Սարյեանի, Գոճոյեանի, Յակոբ Յակոբեանի, Բաշին-ճաղեանի աշխատանքները: Յոն հիմնականին մէջ ցուցադրուած են ժամանակակից նկարիչներու աշխատանքները՝ Չուլում Գրիգորեանի, Լուսիկ Ազուլեցիի, Լավինիա Բաժբեուք-Մելիքեանի, Փարաւոն Միրզոյեանի, Յովհաննես Շարաբեանի եւ այլոց:



Պատկերասրահի մասնաճիւղին մէջ պարբերաբար կազմակերպուած են ցուցահանդէսներ՝ Յրազղանի գեղարուեստական դպրոցներու եւ մշակութային կեդրոններու սաներու մասնակցութեամբ:

Դիմացը կը գտնուի «Քաղաքային այգին», որ անտառ կը յիշեցնէ:

Յանգիստի լաւագոյն տարբերակ

Յրազղանի ամենագեղեցիկ վայրերէն է «Ծովհնար» արհեստական լիճը (ջրամբարը), որ հիմնադրուած է 1950-ականներուն: «Ծովհնարը» կարելի է տեսնել հազիւ քաղաք մտած, այն Կեդրոն եւ Աղբիւրակ թաղամասերուն



մէջտեղէն է: Ամրանը լիճը բնակչութեան սիրուած հանգստեան գօտիներէն է: Այստեղ կարելի է փոքրիկ ձուկեր որսալ եւ նաւակներով լողալ:

Լիճը պարբերաբար կը ցամքի, սակայն միւսնոյն է՝ համահունչ կը դիտուի շրջապատող բնութեան հետ: Լիճին մէջտեղը «ջուրէն դուրս եկող գեղեցկուհիի» արձանն է:

Ախտեցիներու աւանդական կերակուրներէն պէտք է նշել սիբեխով եւ ցորենով սփասք, չոր թանը, հաճարով տոլման, կճուճի մէջ պատրաստած թօնի հարիսան եւ թօնի կլոր գաթան: Մինչ օրս շատ ընդունուած է «շոռուայ» ճաշը, որ մէտ է գետնախնձորէ կը պատրաստեն:

Առեղծուածային Մաքրաւանը

Նախկին Մաքրաւան գիւղին մէջ (այժմ՝ Յրազղանի թաղամաս) բլրակի վրայ կը գտնուի Մաքրաւան վանական համալիրը, որու գլխաւոր եկեղեցին 13-րդ դարի Սուրբ Աստուածածինն է՝ շրջապատուած բազմաթիւ



խաչքարերով: Սուրբ Աստուածածնի կողքին կը գտնուի 10-րդ դարի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, ինչպէս նաեւ՝ փոքրիկ գերեզմանոցը:

Նոյն տարածքին մէջ բնակելի խարխուլ տուներ կանգնած են, իսկ եկեղեցիին շուրջ կը սիրեն հաւաքուիլ թաղի տղաները:



Եկեղեցիները չեն գործեր, սակայն այնպիսի զգացողութիւն է, որ Մաքրաւանի գեղատեսիլ տարածքը ուժանիւթային դաշտ է, որ «տեսանելի» է միայն տեղացիներուն համար:

Բարի յուշերու քաղաք

Բնակիչները կ'ըսեն, որ այստեղ պարզ, հանգիստ եւ անկեղծ մարդիկ կ'ապրին, որոնց շնորհիւ ալ կը ստեղծուի քաղաքին պատկերը:

Անոնք կ'ըսեն, որ առաջին հերթին Յրազղանը կը կապւի Նախնիներուն հետ՝ բոլոր աւանդութիւններով, համեղ ուտեստներով, հին պատմութիւններով, այն ժամանակաշրջանով, երբ ախտեցիները միմեանց հոգեբով կ'ապրէին:

ԱՄՐ ՉԱԿԱՆ

ԿԻՆԵՐՈՒ ԶԵՄՓԻՆԸ ԼԻԿԻ ԿԻՍՄԱՐՏԱԿԱՆԻ ԴԱՐՁ ՊԱՐՍԵԼՈՆԱ ԶԱՍԱԲ ԱՄԱՐՏԱԿԱՆ

Երրորդ ֆուտբոլի կիներու ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Չեմփիոնզ Լիգի կիսաարտական հանգրուանի դարձի մրցումներուն, Անգլիոյ «Չելսի»-ն իր



դաշտին վրայ մրցեցաւ ախոյեան Սպանիոյ «Պարսելոնա»-ին դէմ: Երթի մրցումին, «Չելսի» իր դաշտէն դուրս յաղթած էր միակ կողով: Ուրեմն, «Պարսելոնա» պէտք է յաղթէր երկու կողի տարբերութեամբ անցնելու համար արտական փուլ: «Պարսելոնա» անելի արդիւնաւետ կազմն էր այս հաւասարակշռուած մրցումին: Կիսապաշտպան Այթանա Պոնտաթի 25-րդ վայրկեանին յառաջ տարաւ «Պարսելոնա»-ն, պաշտպան Փաթրի Կուիխարրոյի փոխանցումով: 59-րդ վայրկեանին, «Չելսի» մեծ հարուած ստացաւ, երբ գանատացի պաշտպան Պուքա-Նան ստացաւ իր երկրորդ դեղին քարտը: 75-րդ վայրկեանին, շուետացի յարձակող Ռոյֆէ տուգանային հարուածով հաշիւը դարձուց 0-2: «Պարսելոնա» յաղթեց երկու կողի տարբերութեամբ ու երկու մրցումներու հաշիւով անցաւ արտական փուլ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Չելսի (Անգ.) - Պարսելոնա (Սպ.) 0-2, երթ. 1-0

ԼԻԲԱՆԱՆԻ Գ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ Յ.Մ.Մ. ԶԱՄԱՍԱՐԵՅԱԲ ԱՌԱՋԱՏԱՐԻՆ ԶԵՏ

Լիբանանի ֆուտբոլի Գ. դասակարգի ախոյեանութեան դարձի նախափուլին՝ 9-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, Գ. խմբակին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Յ.Մ.Մ.» մրցեցաւ առաջատար Թուրայի «Ռիսալա»-ին դէմ ու արձանագրեց իր 4-րդ հաւասարակշիւը: Իսկ 5-րդ դիրքը գրաւող «Ալիլի Սայտա»-ն դուրս ելաւ վտանգաւոր գոտիէն ու գրաւեց 4-րդ դիրքը յաղթելէ ետք 6-րդ դիրքը գրաւող «Շապապ Ալ Պըրժ»-ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Գ. խմբակ. - Շապապ Պըրժ - Ալիլի Սայտա 0-1
- Շապապ Յումին Թահթա - Յիլալ Յարըթ Նաամէ 1-0
- Ռիսալա Թուրա - Յ.Մ.Մ. 0-0
- Դասակարգում. 1) Ռիսալա 23 կէտ 21-2, 2) Շապապ Յու-մին Թահթա 13 կէտ 14-10, 3) Յ.Մ.Մ. 10 կէտ 8-12, 4) Ալիլի Սայտա 10 կէտ 8-13, 5) Յիլալ 9 կէտ 6-12, 6) Շապապ Պըրժ 7 կէտ 5-13

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՍԻՈՑ ՄԻՆՉԵՒ 23 ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՄԱՐՏ. 17:00 Ինտունեգիա (2) - Իւզաբէիտան (1)
- 20:30 Ճափոն (1) - Իրաք (2)
- ՍՊԱՆԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ 22:00 Պարսելոնա (3) - Վալենսիա (8)
- ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 34-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ 21:45 Ճենովա (12) - Զալիարի (14)
- ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ 22:15 Եսթրելա (15) - Ֆարենսէ (12)
- ՌՈՒՄԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 26-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ 13:00 Կրիլիա Սովետով Սամ. (5) - Զրասատար (2)
- 15:15 Ռուսիան Զազան (9) - Ուրալ Եքաթ. (14)
- 19:45 Ռոսթով (8) - Օրենպուրկ (13)
- ՇՈՒԵՏԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ 20:00 Պրոմիսփոյոքարա Սթը. (6) - ԻՖՔ Կեթըպորկ (12)
- ՊԱՍԵՏՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԵՅ.-Ի ԸՐՁ.ՓԼԵՅ-ՕՏ 02:30 Մայամի Յիթ (8) - Պոսթըն Սելթիքս (1)
- 03:30 Նիւ Օրլէանզ Փելիքանզ (8) - Օքլ. Սիթի Թանտըր (1)
- 05:00 Տենվըր Նակէթ (2) - ԼԱ Լէյքըրզ (7)
- ՊԱՍԵՏՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅ. ԿԻՍՄԱՐՏ. 21:45 Պերուք Զլապ (2) - Յըքմէ (3)
- ԹԵՆԻՍԻ ՄԱՏՐԻՏԻ ՄԱՍԹԸՐԶԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ 11:00-Են սկսեալ, «beinsports» կայանէն
- ՅԵՇԵԼԱՐՇԱԲ 16:25 La Vuelta Feminina շրջալ., «eurosport» կայանէն:

Logo of Ararak Dance Troupe and text: ԱՐԱՐԱԿ ԴԱՐԱՆՈՒՄԻՒՄԻ ԵԼՈՅԹՆԵՐ AREK DANCE TROUPE 31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

(Շարունակուած Ա. Էջէն)

ապահովել գերիններու ազատ արձակումը: Իսկ ապահովական սեղմ կառավարութեան նախարարներէն Պէտի Կանց սպառնաց տապալել կառավարութիւնը, եթէ անոր անդամները ընդդիմանան գերիններու փոխանակումի լաւ առաջարկներուն: «Եթէ Նեթանիահուի կառավարութիւնը կանխէ գերիններու փոխանակումի համաձայնութիւնը, ապա իրաւունք չունի իր տիրապետութեան տակ պահել երկրին դէպքը», ըսաւ Կանց: Ընդդիմութեան առաջնորդ



Եաիր Լափիտ իր կարգին ըսաւ. «Եթէ ընտրանք ըլլայ գերինները ազատ արձակելու համար Կազայի մարտերը դադարեցնելու, ապա պէտք է ամբողջացնենք գերիններու փոխանակումին համաձայնութիւնը», ըսաւ Լափիտ: Իսկ արտաքին գործերու նախարար Եսրայէի Զաք շեշտեց, որ եթէ գոյնաց գերիններու փոխանակումի համաձայնութիւն, այդ պարագային իրենք պիտի սառնեցնեն Ռաֆահի գործողութիւնը:

ՄԵՇԱԳՈՅՆ ԱՐԷՏ

Պաղեստինի նախագահ Մահմուտ Ապպաս ահազանք, թէ պաղեստինցիներու պատմութեան մեծագոյն աղէ-



տը պիտի պատահի, եթէ իսրայէլեան բանակը Ներխուժէ Ռաֆահի շրջանը, այնպէս ինչպէս շարունակաբար կը սպառնան իսրայէլցի պաշտօնատարները: Միացեալ Նահանգներու սպիտակ Տունը յայտարարեց, թէ նախագահ Ճո Պայտըն հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Իսրայէլի վարչապետ Պէտիամին Նեթանիահուի հետ՝ քննարկելու համար Կազայի մէջ զինադադար յայտարարելու եւ գերինները ազատ արձակելու հնարաւորութիւնները: Երկու ղեկավարները քննարկած են զինադադար յայտարարելու ուղղութեամբ շարունակուող աշխատանքին մանրամասնութիւնները:

ՇԱՐԿԱԶԱՐԴԸ ՈՒՄԲԵՐՈՒ ՏԱԿ

Յակառակ Կազայի մէջ տիրող ահաւոր վիճակին, արեւելեան ուղղափառ եկեղեցոյն հետեւորդները երկ տօնեցին Շաղկազարգը, թէւս ուրախութիւնը բացակայ էր ժողովրդին՝ ներառեալ երեխաներուն դէմքէն: Կազայի մէջ կը բնակի շուրջ հազար քրիստոնէայ՝ մեծ մասամբ յոյն ուղղափառ յարանուանութեան հետեւորդներ:



Իսկ Երուսաղէմի մէջ, հրեաներու գատիկին ճոյ օրը անելի քան վեց հարիւր ծայրայեղական իսրայէլցիներ Ներխուժեցին Աքսայի մզկիթի շրջափակ, լարուածութիւն իրահրելով պաղեստինցիներուն եւ ոստիականութեան հետ:

ՊԱՐԷՅՆ-ՍՈՒՐԻԱ ՄԵՐՁԵՑՈՒՄ

Սուրիոյ պատետազմի տարիներուն խորացած լարուածութենէն ետք, Պահրէյի իշխանութիւնները այժմ կը փորձեն բնականոնացնել յարաբերութիւնները Դամասկոսի հետ: Այս առումով, արտաքին գործերու նախարար Ապտէ Լաթիֆ պըն Ռաշէտ Չայյանի իր սուրիացի պաշտօնակից Ֆայսալ Մըքտատի հետ Դամասկոսի մէջ քննարկեց երկկողմանի կապերը ամրապնդելու միջոցները: Նախարարներ անդրադարձան նաեւ տարածաշրջանի ապահովական ու քաղաքական իրադարձութիւններուն:

ՌՈՒՄԵՐԸ ԿԸ ՅԱՌԱՋԱՆԱՆ

Ուքրանիոյ զինուած ուժերու սպայակոյտի պետը յայտարարեց, թէ Ռուսիոյ դէմ պատերազմի ճակատին վրայ ուքրանացիներուն դիրքերը թուլացած են, մինչ ռուսները կը հասնին մարտավարական յաջողութիւններու: Խօսելով սաստիկ մարտերուն մասին, ուքրանացի զօրավարը նշեց, թէ «որոշ դիրքեր մէկ օրուան ընթացքին ձեռք ձեռք կ'անցնին»:

«ԿԻԼԻԿԻԱ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՒ ԹՎՆՊԱՐԱՆԻ ԱՐՄԱՐԸ

Սուրբ Էջմիածնի Կրօնասէր տիկնանց համախմբումի ատենապետուհի՝ տիկին Անահիտ Տանճիկեան իր վարչական, սիրելի անդամներուն եւ համակիրներուն հետ այցելութիւն մը կատարեցին Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանք, Ուրբաթ, 26 Ապրիլ 2024, առաւօտեան ժամը 9:45-ին:



Այցելութիւնը սկսաւ Նախ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանքին մէջ աղօթքով: Մեր Ապրիլեան Նահատակներուն հոգիներուն համար աղօթք բարձրացուցինք առ Աստուած:

Ապա, մեկնեցանք «Կիլիկիա» մատենադարանի շէնքը: Մեզ սիրալիւր ընդունեց Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը՝ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչը: Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանը հիմնուած է երջանկայիշատակ Տ. Բաբգէն Ա. արքեպիսկոպոսի կողմէ 1931-ին:

Ան մատենադարանի մասին խորունկ եւ յստակ տեղեկութիւն փոխանցեց, որ շատ հետաքրքրական էր: Ապա ուղղութեամբ չորսյարկանի «Կիլիկիա» թանգարանը, որ Լիբանանի թանգարաններու ցանկին մէջ մեծ կարեւորութիւն ունի: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին օրով զարգացաւ «Կիլիկիա» թանգարանը:



Մեզ ընդունեց տիկին Նարէն, որ մանրամասն տեղեկութիւն փոխանցեց, թէ ինչպէս Սիսի կաթողիկոսութեան թանկարժէք գոյքերը, Միւրոնի կաթսան, Սուրբ մասունքները, ձեռագիրքերը, ծիսական զգեստները եւ այլ հոգեւոր հարստութիւնները կարողացան գաղթի ճամբուն վրայ Սիսէն դէպի Յալէպ, ապա Անթիլիաս փոխադրել կառնեցրու վրայ, դիմագրաւելով բազմաթիւ դժուարութիւններ:

«Կիլիկիա» թանգարանի բացումը կատարուած է 1998-ին: Յատկանշական էին հետեւեալ նիւթերը: Մասունքներ եւ մասնատուփեր - ոսկերչութիւն / ասեղնագործութիւն եւ ծիսական զգեստներ - ձեռագիրներ / Տպագիր գիրքեր - խաչքարեր - դրամանիշեր / Յնագիտական ցուցանմուշներ - գորգեր եւ վիճակներ - կերպարուեստ:



Այժմ, «Կիլիկիա» թանգարանի տեսուչն է Դոգշ. Տ. Արտաւազդ Վրդ. Շարոյեանը:

Սուրբ Էջմիածնի Կրօնասէր տիկնանց համախմբումի կազմակերպած այցելութիւնը Կիլիկիոյ կաթողիկոսութեան համալիրէն ներս մեծ գոհունակութիւն պատճառեց այցելուներուն: Ներկաները ունկնդիր եւ ականատես ըլլալով տրուած տեղեկութիւններուն, անոնք զգացին իրենց հոգիներուն մէջ զուտ հայապահպանութիւն եւ զօրակոխ հաւատք մեր ոգեղէն արժեքներուն եւ տոհմիկ աւանդութիւններուն նկատմամբ:

Արժեւորեց մեր հոգեւոր հարստութիւնը եւ ծանօթացը նենք բոլորին:

ԱՆԱԿՏ ՊՈՒՆՏՈՒԹԵԱՆ ՏԱՆՁԻԿԵԱՆ

ARARAD DAILY NEWSPAPER MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com